

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 3141.2 հազ.տոննա, որը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ նվազել է 13.1 տոկոսով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 1670.0 մլն. տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 5.7 տոկոսով:

2000թ. հունվար-սեպտեմբերին, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ.հունվար-սեպտեմբեր	2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ սեպտեմբեր	2000թ. սպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝	3141.2	86.9	440.5	101.9
Երկաթուղային տրանսպորտով որից	992.9	94.1	117.9	98.6
արտահանվել են բեռներ	128.3	93.5	24.5	139.2
ներկրվել են բեռներ	633.6	111.4	59.7	74.0
ներհանրապետական փոխադրումներ	231.0	66.0	33.7	158.2
ավտոտրանսպորտով որից	1415.4	75.5	233.6	101.9
արտահանվել են բեռներ	33.7	47.7	4.2	102.4
դրանից				
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներկրվել են բեռներ	8.5	62.5	0.8	72.7
դրանից	168.7	96.3	24.7	121.1
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով ներհանրապետական փոխադրումներ	36.4	95.0	5.0	108.7
	1213.0	74.5	204.7	99.9
օդային տրանսպորտով որից	9.4	102.2	1.1	110.0
արտահանվել են բեռներ	4.3	127.3	0.5	166.7
ներկրվել են բեռներ	5.1	86.4	0.6	85.7
խողովակաշարային տրանսպորտով	723.5	106.9	87.9	106.7

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ հունվար-սեպտեմբերի նկատմամբ նվազել է 5.9 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 63.8 տոկոս (1999թ. հունվար-սեպտեմբերի 53.9 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 12.9 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 13.0 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 23.3 տոկոս (1999թ. հունվար-սեպտեմբերի 33.1 տոկոսի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ հացահատիկի և աղացվող մթերքների մի փոխադրման ծավալն ավելցել 48.2 տոկոսով, իսկ սև մետաղների ջարդոցի փոխադրման ծավալը նվազել է

56.9 տոկոսով, անտառային բեռներից՝ (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլ) 54.5 տոկոսով, ցեմենտինը՝ 51.6 տոկոսով, հանքային շինարարական նյութերինը՝ 36.0 տոկոսով, նավթ և նավթամթերքներինը՝ 33.1 տոկոսով, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 20.8 տոկոսով, սև մետաղներինը՝ 13.9 տոկոսով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 31.6 տոկոս, նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 29.2 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-սեպտեմբերին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ աճել է 3.8 տոկոսով, կազմելով 248.5 մլն. տոննա-կմ: 2000թ. հունվար-սեպտեմբերին վազոնների միջին օրական բեռնաթափումը նվազել է 6 միավորով և կազմել 49 վազոն՝ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 55 վազոնի դիմաց, իսկ բեռնումը նվազել է 9 միավորով և կազմել է 22 վազոն: Նույն ժամանակաշրջանում 0.5 օրով դանդաղել է վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1415.4 հազ.տոննա (1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 24.5 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 11.9 տոկոս (1999թ. հունվար-սեպտեմբերի 9.3 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 21.6 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 21.9 տոկոսի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.4 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 3.8 տոկոսի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով՝ 25.2 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 19.3 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 85.7 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 86.9 տոկոսի դիմաց):

2000 թ. հունվար-սեպտեմբերին բեռնաշրջանառությունը կազմել է 26.7 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի համեմատ նվազել է 15.5 տոկոսով: 2000թ. հունվար-սեպտեմբերին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 45.1 տոկոս՝ 1999թ. հունվար-սեպտեմբերին 51.8 տոկոսի դիմաց:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 9.4 հազ. տոննա (1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.2 տոկոսով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 54.3 տոկոս (1999թ. հունվար-սեպտեմբերի 64.1 տոկոսի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 45.7 տոկոս (1999 թ. հունվար- սեպտեմբերի 35.9 տոկոսի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 6.8 մլն. տոննա-կմ և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 26.1 տոկոսով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 տոկոս և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Օդային տրանսպորտով փոխադրված բեռների 31.9 տոկոսը (3.0 հազ.տոննա) տեղափոխվել է հայաստանյան չարժակազմով (1999թ. հունվար-սեպտեմբերի 42.4 տոկոսի կամ 3,9 հազ. տոննա բեռի դիմաց), որից 3.3 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված բեռնափոխադրումները՝ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 5.1 տոկոսի դիմաց:

ՀՀ օդային տրանսպորտով բեռնափոխադրումները


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎ ԱԾ

	2000 թ. հունվար-սեպտեմբեր	2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, տոկոսներով	2000թ. սեպտեմբեր	2000թ. սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ, տոկոսներով
Փոխադրվել են բեռներ*, հազ. տոննա այդ թվում՝	9.4	102.2	1.1	110.0
հայաստանյան շարժակազմով	3.0	76.9	0.3	100.0
Բեռնաշրջանառություն* , մլն. տ/կմ	6.8	73.9	0.7	87.5

2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ օդային կանոնավոր բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ԱՊՀ երկրների բեռնափոխադրումների ծավալը կազմել է 72.4 տոկոս (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի 78.4 տոկոսի դիմաց), իսկ միջազգային բեռնափոխադրումների ծավալը կազմել է 27.6 տոկոս նախորդ տարվա նույն ցուցանիշի 21.6 տոկոսի դիմաց:

խողովակաշարային տրանսպորտ. 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներմուծվել 723.5 հազ. տոննա բնական գազ և 1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի համեմատ աճել 6.9 տոկոսով, իսկ բեռնաշրջանառությունը՝ 6.9 տոկոսով և կազմել 1388.0 մլն տոննա-կմ: 2000թ. հունվար-սեպտեմբերին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 23.0 տոկոս՝ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 18.7 տոկոսի դիմաց:

2000թ. հունվար-սեպտեմբերին բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին միջոցների (տոկոսներով)



Ուղևորափոխադրումներ. 2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը կազմել է

* Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները 98506.1 հազ.մարդ, որը 1999թ. հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 1.8 տոկոսով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 1576.7 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ

նվազել է 4.3 տոկոսով:

2000թ. հունվար-սեպտեմբերին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ.հունվար-սեպտեմբեր	2000թ.հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. սեպտեմբեր	2000թ.սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ <i>այդ թվում՝</i>	98506.1	98.2	10666.3	104.8
Երկաթուղային տրանսպորտով	813.1	75.2	101.9	61.9
ավտոտրանսպորտով	75099.7	102.2	7806.4	103.0
օդային տրանսպորտով	441.9	92.9	58.8	77.7
էլեկտրատրանսպորտով	22151.4	87.5	2699.2	114.2

2000թ. հունվար-սեպտեմբերին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.8 տոկոս, նախորդ տարվա 1.1 տոկոսի դիմաց, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 76.2 տոկոս, նախորդ տարվա 73.2 տոկոսի դիմաց, օդային տրանսպորտինը՝ 0,5 տոկոս, նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ և էլեկտրատրանսպորտինը՝ 22.5 տոկոս, նախորդ տարվա 25.2 տոկոսի դիմաց:

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ.հունվար-սեպտեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 1999 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ նվազել է 24.8 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 35.3 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 2.5 տոկոսով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին, ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ ավելացել է 2.2 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 1036.4 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 2.2 տոկոսով:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 441.9 հազ.ուղևոր, որի 48.8 տոկոսը (215.5 հազ. ուղևոր) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը:


ՀՀ օդային տրանսպորտով ուղևորափոխադրումները

	2000թ. հունվար-սեպտեմբեր	2000թ.հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ,տոկոսներով	2000թ սեպտեմբեր	2000թ.սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ, տոկոսներով
Փոխադրվել են ուղևորներ*,հազ. ուղևոր <i>այդ թվում՝</i>	441.9	92.9	58.8	77.7
<i>հայաստանյան շարժակազմով</i>	215.5	81.1	29.4	76.8
Ուղևորաշրջանառություն* հազ. ուղ.կմ	412.6	84.0	57.3	79.4

Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 1.8 տոկոսը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները, նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի 1.3 տոկոսի դիմաց: Չարտերային չվերթների 71.1 տոկոսը բաժին է ընկել միջազգային հաղորդակցության թռիչքներին (մնացածը՝ ԱՊՀ երկրներ) 1999թ.

հունվար-սեպտեմբերի 70.3 տոկոսի դիմաց: 2000թ. հունվար-սեպտեմբերին կանոնավոր չվերթներով կատարված ուղևորափոխադրումների ծավալում ԱՊՀ երկրների հետ ուղևորափոխադրումների բաժինը կազմել է 83.1 տոկոս, իսկ այլ երկրների հետ՝ 16.9 տոկոս (1999թ. հունվար-սեպտեմբերին, համապատասխանաբար՝ 87.2 և 12.8 տոկոս):

2000 թ. հունվար-սեպտեմբերին կանոնավոր չվերթներով ուղևորափոխադրումների ծավալը ըստ հաղորդակցության տեսակների (տոկոսներով)



2000թ. հունվար-սեպտեմբերին օդային տրանսպորտով փաստացի կատարված չվերթների քանակը չվացուցակով նախատեսված չվերթների քանակի նկատմամբ գերազանցել է 15.2 տոկոսով կազմելով 4063 թռիչք, (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ համապատասխանաբար՝ 19.4 տոկոս կամ 4119 թռիչք): Ընդ որում, ԱՊՀ երկրների հետ հաղորդակցությամբ կատարվել է 3140 թռիչք, այլ երկրների հետ հաղորդակցությամբ՝ 923 թռիչք:

Փաստացի կատարված չվերթների 24.5 տոկոսը կատարվել է ուշացումով, որից՝ 11.2 տոկոսը անբարենպաստ եղանակի, իսկ մնացածը՝ այլ պատճառներով:

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 412.6 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 16.0 տոկոսով:

Էլեկտրատրանսպորտ: 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 22151.4 հազ. ուղևոր և 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ նվազել 12.5 տոկոսով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 92.4 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 13.2 տոկոսով:

*Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

2000թ. հունվար-սեպտեմբերին ուղևորների փոխադրումների ցուցանիշն, ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ց

	2000թ. հունվար-սեպտեմբեր	2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (տոկոսներով)	2000թ. սեպտեմբեր	2000թ. սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ, տոկոսներով
Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, ընդամենը, հազ. մարդ	22151.4	87.5	2699.2	114.2
<i>այդ թվում՝</i>				
մետրոպոլիտենով	11339.8	90.7	1396.6	119.5
տրամվայով	3731.9	82.2	447.1	110.2
տրոլեյբուսով	6866.0	84.6	843.8	107.3
ճոպանուղով	213.7	139.9	11.7	4 անգամ

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 51.2 տոկոս, իսկ տրոլեյբուսով՝ 31.0 տրամվայով՝ 16.8 և ճոպանուղով՝ 1.0 տոկոս:

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարների 651 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 11.7 տոկոսով: Պատահարներից զոհվել է 154 և վիրավորվել 833 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 160 և 895 մարդու դիմաց:

2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 651 ճանապարհատրանսպորտային պատահարներից չեն բացահայտվել 63-ը , որոնց հետևանքով զոհվել են 13 և վիրավորվել 53 մարդ: